

Հոգի, գէմ դու լաս, կ'ասես,
 Սիրտս է սեւ քան ըզգործելի.
 Ի զարիպութեան տերտէն
 Երեսիս գունը կը քաղուի:
 Յորժամ ես 'ի միտ ածեմ,
 Օ իմ եղբարքն եւ զիմ սիրելիք՝
 Հոգիս բերանիս կ'առնու,
 Քակելոյ ճարակ մի չունի:
 Դարիպ, զասայ մի աներ,
 Դասայէն մարդըն չիշահեր.
 Շատ մանուկ զասայ կ'անէ,
 Ի շահին տեղն է ինք չէնէր:
 Դասան շատոնց ցաւ կու տայ,
 Ի ցաւէն մարդըն մեռանի.
 Օ ինչ սիրտն որ հասրաթ ունի
 Ի մէնէն մահրում կու լինի:

Բանգ զղարիպն ասեմ,
 Որ յօտար յերկիր հանդիպի.
 Բշերն արտասուք 'ի լի
 Ի յերեսն 'ի վայր կու թափի:
 Յորժամ 'ի մէջիս նըստի,
 Յանկարծ սրտիկն արիւնի.
 Օ աչերն 'ի բոլոր ածէ,
 Կարեւոր ոչ ոք նա չունի:
 Ի մէնքս եմք զարիպ, եղբարք,
 Հայրենի մարդ իսկի չունինք.
 Հաւասար գնալու եմք մեք,
 Օ ի այն կեանքն է մեզ հայրենի:
 Ի ստէնս քեզ ճար արա,
 Որ անտէն հոգիդ չի տանջի.
 Օ սուրբքն 'ի քեզ եղբարք շինէ,
 Ու զհրեշտակք արա սիրելի:

Պատկառուի :

Բզպատկառուին իսկ ամօթխած սընտ խնամով 'ի ծաղկոցիդ,
 Ի նախանձ ըզգաստութեան մըշակուհիդ ծաղկատարփիկ.
 Հազիւ մատին հուպ 'ի մանրիկ լեալ տերեւիկս, յինքն ամփոփի:
 Ոչ ըզգացումն 'ի նմա կարծեմ կենդանական ազդեալ 'ի բնէ,
 Եւ պատկեր և եթ նորին զարմանահրաշ տըպաւորեալ:

ՎԵՐԻՆԻ ՈՐՄՁԻԱՆԱՅ, ԳԻՐԻ Գ. 288-292

Տնկոց մէջ մասնաւոր յատկութիւն
 ունեցողներէն մէկն ալ է պատկառու-
 կը, որ երբ օտար առարկայ մը իրեն
 դպչի՝ մէկէն կ'ամփոփուի: Շատ տե-
 սակ կը բաժնուի պատկառուկը, բայց
 սովորականն է հասարակ պաշտօն-
 սուածը՝ որուն թէպէտ արմատը պզտիկ
 է՝ բայց շատ ճիւղեր կ'արձրկէ կապոյտ
 կամ ծիրանեգոյն և բրդոտ, գրեթէ
 ինչուան մէկ ու կէս ոտք երկայնութիւն,
 որոնք ընդհանրապէս դէպ 'ի գետին
 խոնարհած կ'ըլլան, երկայն, ողորկ ու
 նեղ տերեւներով՝ որ երկու կողմանէ
 կանոնաւոր ոճով մը շարուած են, և
 մէկէն ձեռք դպածին պէս իրարու կը
 մօտիկնան, անանկ՝ իբրեւ թէ զգաց-

մունք ունենային: Տերեւներուն սկիզ-
 բէն, այսինքն ճիւղին հետ միացած մա-
 սէն՝ ծաղիկներու փունջ մը կ'աճի
 բաժակաւոր կամ պզտիկ հաւերթածե-
 դուխներով, ճերմակագոյն կամ թե-
 թե մը մսագոյն. իւրաքանչիւրը չորս
 առէջք ունին. աս ծաղիկներուն կը յա-
 ջորդեն տասուերկուքէն ինչուան տաս-
 նըհինգը մէկէն փշապատ և տափակ
 պճեղներ, չորս կամ հինգ գծաչափ եր-
 կայն, մէկ ու կէս գծաչափ լայն՝ որոնք
 իրեք պզտի հունտեր կը բովանդակեն:
 Իստ ոմանց եթէ պատկառուկին տե-
 րեւները ծամուին՝ հիւթ կը զրգուեն և
 կը չափաւորեն հազը, և խարանի գոր-
 ծածուելով երիկամանց ցաւերը կը մեղ-

մնացնեն և խոյ՛ գոյացնող այտուցնե-
րը կը բռնեն :

Երբ պատկառուկին տերեւներուն
դպչաւի տաք ատեն, աւելի շուտ կ'ամփո-
փուին ու մէկէն ՚ի մէկ կը նուաղին, և
քանի մը վայրկեան վերջը նորէն իրենց
առաջին կենդանութիւնը կը ստանան :
Երբայէս նաև արեւուն մտնելուն ժա-
մանակ պատկառուկը այնպէս կը նուա-
ղի որ մեռած ու չորցած կը կարծուի .
բայց նորէն արեւուն ելլելուն միջոց իրեն
բնական վիճակը կը ստանայ, և որչափ
աւելի արևը պայծառ ու օդը գեղեցիկ
է՝ այնչափ աւելի կը կենդանանայ . և
յանկարծական մեծ ամպ մը որ ել-
լայ երկնից երեսը, կամ մըրկալից օդով
մթութիւն մը երբ տիրէ՝ նորէն ամ-
փոփման վիճակի մէջ կ'ընկնի, զորն որ
տնկաբաններէն ոմանք տեսակ մը քուն
կամ հանգիստ կը համարին :

Հիւլ առ Լիննէոս գրած նամակին
մէջ՝ որ պատկառուկին շարժմանը նիւ-
թական պատճառներուն վրայ է, ջեր-
մութեան ներկայութիւնը կամ պա-
կասութիւնը խոնաւութեան կամ չո-
րութեան մէջ՝ պատճառ սեպեց այս ե-
րևութիւն, բայց ՚ի զուր . վասն զի օդը
ամենաշատ փոփոխութեանց ենթակայ
կ'ըլլայ այսպիսի կանոնաւոր շարժմանը
մը յառաջ բերելու համար . ուստի բը-
նական պատճառաց մէջ քննելով կրնայ
ըլլալ նաև լոյսը : Երան և Տիւհամէլ
պարսկները առանձին գիտողութիւններ
ըրին պատկառուկին վրայ պայծառ օ-
դով օր մը մութ յարկի մը մէջ, բայց
իրենց հետազօտութեանց արդիւնքը
իրենց ալ անհաստատ և շատ անստոյգ
տեսնուեցաւ : Երկայն պէտք է խոստո-
վանիլ որ կատարեալ մթութիւնը շատ
աւելի ազդեցութիւն ունի պատկառու-
կին և ուրիշ քնասէր կարծուած տնկոց
վրայ՝ ամենաբիրտ ձեռքի մը դպչելէն
աւելի, որ կրնանք ըսել թէ միայն առա-
ջին աստիճանի կծկումն և նուաղումն
կը պատճառէ քնասէր տնկոց : Հաւա-
նական կ'երևի թէ այս տնկոց ցուցը-
ցած գիտաւոր երևոյթներուն պատճա-

ռը լոյսն է . վասն զի միշտ դիտուած է
որ ջերմանոցներու և նկուղներու մէջ
պահուած տնկոց ճիւղերը միշտ դէպ ՚ի
ջերմանոցին պատուհանները կ'ուղղուին
կամ դէպ ՚ի նկուղին լուսանցոյցներուն,
որով ըսել է թէ միշտ լոյս կը փըն-
տուեն :

Ենչպիսի մարմնով մը որ դպչինք
պատկառուկին, կ'ըսէ տնկաբան հեղի-
նակ մը, դիտուած է որ զգացումը մաս-
նաւորապէս յօդուածոց մէջ է, եթէ
ճիւղերուն վրայ և եթէ այլ և այլ ոտ-
քերուն վրայ, և մասնաւորապէս նոյն
յօդուածոյն ճերմակ մասանցը վրայ :
Պաշելով նուազած ճիւղի մը նորէն
կենդանանալուն համար հարկաւոր ե-
ղած ժամանակն կը փոփոխի ըստ զօ-
րութեան տնկոյն, ըստ օրուան ժամուն,
ըստ եղանակին, ըստ ջերմութեան և
մթնոլորտին ուրիշ հանգամանացն հա-
մեմատ . մասանց կենդանանալուն կար-
գըն ալ նոյնպէս կը փոփոխի : Երբե-
քի է նաև քիչ մը ճարտարութեամբ ա-
ռանց տերեւները թառամեցնելու ճիւղ
մը կտրել, ասանկ դեռ ուրիշ զանազան
փորձեր ըրած են տնկաբանք պատկա-
ռուկին վրայ՝ զորոնք մի առ մի ըսելը
աւելորդ համարելով, օրինակի համար
այս մէկ քանին յիշենք :

Ա. Պատկառուկին վրայ եղած շարժ-
մունքը աւելի զգալի և աւելի շատ է՝
երբ ինքը սաստիկ աճման վիճակի մէջ
կը գտնուի : Բ. Շարժելէն կամ գըր-
գունէն աւելի քիչ փոփոխութիւն կամ
զգացմունք մը կը կրէ տունկը քան
կտրելէն : Գ. Յնցիւն մը, ցետուած մը,
սաստիկ տաքն ու ցուրտը, եռացած ջրոյ
և թռչանկան ոգիքներու շոգին, վերջա-
պէս՝ ինչ որ կենդանեաց ջղային գոր-
ծարանաց վրայ կրնայ ազդեցութիւն ը-
նել, պատկառուկին վրայ ալ կ'ազդէ :
Դ. Պատարկութեան կամ ջրի մէջ
ալ ընկղմելով կը տկարանայ պատկա-
ռուկը, և այլն :

Հասարակ պատկառուկէն զատ ու-
րիշ Դոփա-Վափի՝ անունով պատկա-
ռուկ մ'ալ կայ, որուն ստորագրութիւնը

1730⁶ Վարսէն տուաւ Ռարիզու ձեւն
բանին, արեւելեան Հնդկաց ուղեորու-
թեանն դառնալով: Դոփա-Վափոն՝ զոր
այսպէս կը կոչեն Սալապարք, միշտ
դէպ 'ի արեւուն կը դառնայ եթէ ելե-
լուն և եթէ մտնելուն ժամանակ, և
կէսօրը ճիշդ զուգահեռական է հորի-
զոնին հետ. և նաև հասարակ պատկա-
ռուկին պէս զգայուն. բայց փոխանակ զի
ուրիշները երբ կ'ամփոփուին տերեւին
դէպ 'ի վեր կ'առնուն, այսինքն՝ իւրա-
քանչիւր տերեւին երկու մասը մէկմէ-
կու հետ կը միացնեն, ասիկայ ընդհա-
կառակն դէպ 'ի վար կ'ամփոփուի. ա-
նանկ որ եթէ իրենց բնական վիճակին
մէջ մատուլ թեթև մըն ալ դաշուի տե-
րեւի մը տեւի կողմը նայելու համար՝
իբրև թէ երևնալու սաստիկ ամենալով
մէկէն 'ի մէկ կը փակուին: Սալա-
պարք երեակայական զօրութեան յատ-
կութիւն մը սեպեր են իրեն այս բնու-
թիւնը, կ'ըսէ Վարսէն, և կը խորհրդա-
ծէ ալ թէ այն տգէտ բարբարոսները
անկարելի է որ ուրիշ մեկնութիւն մը
կարենան տալ:

Քիրիկէ նաև զգայուն թուփ մը կայ
որուն տերեւները մէկէն կը խոնարհին՝
երբ մէկը տակէն անցնի: Վանամա ալ
ուրիշ տեսակ փշալից թուփ մը կը գտ-
նուի որուն տերեւները վար կը ծռին երբ
մէկը քովէն կ'անցնի, և դէպ 'ի ճա-
նապարհորդին զգեստներուն կը ձգուին
որով տեսնողները մէկէն կը հեռանան:
Վանամայի բնակիչները Բարի լոյս դրած
են այս թուփին անունը, պատճառաւ ի-
րեն այս յատկութեւր որ մօտէն անցնո-
ղին գլուխը կը ծռէ:

Հասարակ պատկառուկը Պրազիլի և
Հարաւային Վերիկոյ բնիկ բոյս մըն
է. տաք և խոնաւ տեղումնք շատ կը
սիրէ, մասնաւորապէս շատ թաւ չեղող
մացառուտներ՝ ուր որ փոփոխակի հա-
ւասարապէս արև և շուք կ'ըլլայ: Եւ-
րոպա շատ տեղ զայն պահել ուզողները
պէտք է Զերմանոյի մէջ խնամեն: Եւ
քանի մը տեսակներէն դուրս պատկա-
ռուկ մ'ալ կայ որուն անունը Ծոյլ՝ գրած
1. Mimosa pigra.

են տնկարանք, ամենածանր ամփոփո-
ւելուն պատճառաւ: Երոնցմէ դուրս
դեռ շատ ուրիշ տեսակներ ալ կը գտ-
նուին, որոնց վրայ աւելորդ է խօսքերնիս
երկընցնել, և տեղեկանալ ուզողները
կրնան եւրոպական ընդարձակ տնկաբա-
նութեանց գրքերէն համանալ:

ՊՍՏՄՈՒԹԻՒՆ

ՊՕԼՍՈՅ

(Տես երես 233)

Վոստանդիանոս քանի մը օրէն վեր-
ջը Ռիզանդիոնը պաշարեց. այսպիսի
ձեռնարկութիւն մը ըստ ինքեան շատ
աշխատութեան կարօտ էր, և վախ-
ճանն ալ խիստ անորոշ: Երջին քա-
ղաքական պատերազմաց միջոցները,
քաղքին ամրոցները բոլոր ամրացուցած
էին, և քանի որ իկիանոս ծովակալ
էր, պարսպապահ զօրքը՝ պաշարողնե-
րէն աւելի սովի վտանգէն ազատ էր:
Վոստանդիանոսի նաւատորմիղը արդէն
ճամբայ ելլալու պատրաստուած ըլլա-
լով, Պիրէայէն անցաւ, և սկսաւ մեր-
ձակայ ծովեղերքները պտրտիլ: Վոս-
տանդիանոս հրամանատարներուն պա-
տուէր տուաւ որ Ելլեսպոնտոսի վրայ
երթան. վասն զի իկիանոսի նաւերը
փոխանակ իրենցմէ աւելի տկար թշա-
ւուց մը դիմացը վազելու, ելան նեղ տեղ
մը կեցան, ուր որ շատ ամրացրնելու
ամենեւին կարօտութիւն և օգուտ չը-
կար: Երիսպոս՝ Վոստանդիանոսի անդ-
րանիկ որդին՝ յանձն առաւ յարձակման
գլուխ կենալու, և այնպիսի յաջողու-
թեամբ ու քաջութեամբ 'ի գլուխ տա-
րաւ զայն, որ հայրը վրան մեծ համար-
մունք առաւ և հետեւաբար նախանձն
ալ շարժեցաւ: Պատերազմը երկու
ժամ տևեց: Եւ քանի, թշնամեաց նա-
ւատորմին հրամանատարը՝ յանձն ա-
ռաւ մենամարտութիւն ընելու, ձեռ-